ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Առակի ուսուցումը որպես խոսքի զարգացման միջոց

Հետազոտող ուսուցիչներ՝ Անահիտ Գրիգորյան
Նարինե Հովհաննիսյան

Երևանի Հ.Հայրապետյանի անվան թիվ 78 հիմն. դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹ 4

Ի սկզբանէ էր ԲԱՆ-ը 8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....24

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարասկզբին, հատկապես 2016-2022 թթ.-ի պատմաքաղաքական իրադարձությունները հայոց կյանքում շրջադարձային փոփոխություններ բերեցին պետության բոլոր բնագավառներում. մասնավորապես կրթության, ազգային հոգեխառնվածքի մեջ: 44 – օրյա պատերազմը հիասթափության, հուսահատության, անհուսության մեծ ալիք ծնեց, որը հարվածեց բոլորին: Թվում էր՝ ժամանակը կանգ է առել, հայտնվել ես լաբիրինթոսում և ելք ես փնտրում: Վերլուծելով իրավիճակները՝ հասկանալի է, որ որքան ժամանակը մեր դեմ լինի, կրթությունը պետք է շարունակի իր գործը: Գիտելիքի ուժը թերևս նման պայմաններում ելքի ճանապարհներից մեկն է:

Օրվա սովորողին բարդ ժամանակներն են բաժին ընկել. տրամադրության փոխանցումը դրսից տուն և հակառակը, բայց ուսուցչի դերը կարևորվում է իր գործով սովորողին ետ պահելու քաղաքական հակամարտությունից և ապահովելու կրթության հետագա ընթացքն ու զարգացումը:

Աշակերտին այս իրականությունից տեղափոխել գիտելիքի սեփական աշխարհը, որտեղ էլ կձևավորվի մարդ անհատը, քաղաքացին: Գրագետ, բարձր ինքնագնահատականով օժտված, ազգային արժեքների կրող քաղաքացի և հասարակություն ունենալը ժամանակի հրամայականն է:

Անհատը ձևավորվում է դպրոցում: Նրան կերտողը խոսքն է: Նա է մարդուն ճանաչելի դարձնում: Ուստի այս խնդիրը մեզ համար կարևորագույնն է: Կարծում ենք առակների ուսուցումը բանալին է դեպի մուտք բանավոր խոսքի հետաքրքիր աշխարհ:

Մեր նպատակն է կիսվել դասավանդման սեփական փորձի օրինակներով, որոնք բավարարում են պետական նոր չափորոշիչներից բխող պահանջները:

Կարծում ենք, որ առակների ուսուցման մեր նախընտրած մեթոդները սովորողին ապահովում են 8 առանցքային կարողունակությունների՝ լեզվական և գրագիտության, սովորել սովորելու, ինքնաճանաչման և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական մշակույթ ձևավորելու պետչափորոշիչները: Առակների ուսուցման մեր մեթոդները զարգացնում են նաև սովորողի վերառարկայական հմտությունները: Ուսումնական նյութը ոչ թե վերարտադրություն պիտի լինի, այլ բովանդակության խորը ըմբռնում և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ:

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹ

Ելնելով հանրակրթության բովանդակությունից և ներկայացվող նվազագույն պահանջները իրականացնելուց՝ մենք կարևորել ենք սովորողի բանավոր խոսքի զարգացումը, որի միջոցով էլ հենց իրականացվում են պահանջները: Խոսքը ենթադրում է անհատի գիտելիքների ունակությունների համախումբ և դրանց տեղին գործածություն, այսինքն՝ տեսականը գործնականում ճիշտ կիրառելու հմտություններ և կարողունակություն:

Տարրական դպրոցից միջին դպրոց փոխադրված սովորողի առջև դրվում է արդեն կարդացածը վերարտադրելու կարողունակության ձևավորման և զարգացման չափորոշչային պահանջը : Մեր փորձը թույլ է տալիս ասելու, այս խնդրի լուծմանը մեծապես նպաստում է արձակ առակների ուսուցումը: Ինչո՞ւ արձակ: Արձակ խոսքը բնական վիճակն է լեզվական բազմազան միջոցների կիրառությամբ, իսկ չափածոն պայմանական պարտադրված ձևերի թելադրանք է: Արձակ խոսքը թույլ է տալիս կիրառելու մարդու գիտելիքների ամբողջությունը, ենթադրում է դրանց տեղին, արտահայտիչ գործածություն, կապ հոգեբանության, տրամաբանության, գեղագիտության, պատմության, գրականագիտության հետ: Բանավոր խոսքը լեզվական կարողունակությունների՝ տեսականից անցումն է գործնական կիրառության: Տարիների փորձը ապացուցել է, որ սովորողներին արձակ անգիրները ավելի հեշտ են տրվում (հատկապես 8–9 –րդ դասարաններում), քանի որ դրանք ենթադրում են մտքերի տրամաբանական անցումներ, թեկուզ որևէ բառի և կամ արտահայտության բացթողում էապես չի ազդում մտքի վրա, իսկ չափածո անգիրի դեպքում ցանկացած բառի կամ արտահայտության աղավաղումը ոճապես խաթարում է բանաստեղծության բովանդակությունը: Արձակ անգիրը հնարավորություն է ստեղծում բառի կամ արտահայտության հոմանիշային շարքի տեղին կիրառման, որը տանում է բառապաշարի հարստացման, խոսքը մշակելուն և գեղեցկացնելուն. հենց սա է մեր նպատակներից մեկը, ցուցադրվում են լեզվական գիտելիքներն ու հմտությունները, կարևորվում են տրամաբանական շեշտը, արտասանության հստակությունը, ճիշտ դադարներն ու շեշտադրումները, որոնք չպահպանելու դեպքում խոսքը դառնում է անհասկանալի, ձանձրալի: Բացի նշվածից բանավոր խոսքը առավելություն ունի գրավոր խոսքի նկատմամբ. անմիջական կապ է ստեղծվում դասարանի հետ. հնչերանգը, դիմախաղը, յուրաքանչյուր շարժում, անհրաժեշտ է նախ մտածել, ապա ճիշտ ընտրել, քանի որ ի տարբերություն գրավոր խոսքի՝ բանավոր խոսքը անշրջելի է, անջնջելի. Սա էլ նպաստում

է մտքի ճկունությանը (սրա պակասը ցայտուն է), արագ կողմնորոշվելուն. չէ՞ որ բանավոր խոսքի կարողունակությունների և հմտությունների զարգացումը դառնում է սովորողի ողջ կյանքի ուղեկիցը: Գեղեցիկ խոսքը, հարուստ բառապաշարը, արտահայտիչ խոսքը ապացույցն են բարձր մշակույթի կրողի, մտավոր զարգացվածության, վարվեցողության, կիրթ լինելու:

Սա է արդի կարևորագույն մարտահրավերներից մեկը: Բանավոր խոսքը մտածողություն է, հույզերի, կրքերի ներգործություն ունկնդրի վրա, ապրումների արտահայտություն: Խոսքը կարևոր է դիվանագիտական ասպարեզում հատկապես այսօր ծառացած լուրջ խնդիրներ լուծելու համար: Մեծ կարողություն է լավ խոսելը, ինչպես սահմանում է անտիկ աշխարհի մեծ մտածող Արիստոտելը. ասել այն, ինչ պետք է, չասել այն, ինչ պետք չէ, և ասել այնպես, ինչպես պետք է: Սա էլ ընկած է մեր կրթության հիմքում:

Խոսքը *արժեք* է՝ ուժ, հարստություն, գեղեցկություն:Մեր նպատակն է պատրաստել կիրթ, գեղեցիկ խոսող քաղաքացի՝օժտված մտավոր կարողություններով: Գեղեցիկ խոսքը անմիջական ազդեցություն ունի մարդու հոգեկան դրսևորումների վրա. բարի խոսքը կերտում է նաև բարի և ազնիվ հոգի: Տեղին է մեջ բերել մեծ հայրենասեր Գ. Նժդեհի խոսքերը. «Ոչինչ այնքան հեշտությամբ չի մատնում մեր ապրումները, մտածումը, մեր նկարագիրը, որքան խոսքը»:

Խոսքը նաև ուժ ունի: Հիշենք Հայկ Նահապետի կամ Վարդան Մամիկոնյանի կոչերը՝ ուղղված ամբոխին և զորքին. Նարեկացու մատյանը, որ դարեր շարունակ ժողովրդի հոգևոր բժշկության դարմանն է եղել և այն է մինչ օրս. խոսքի վրա է սկզբնավորվել նարեկաբուժությունը: Հոգեթերապևտ Արմեն Ներսիսյանը տարիներ շարունակ փորձել է իր հիվանդներին բուժել բժշկական զանազան մեթոդներով, Ֆրեյդի հոգեվերլուծության մեթոդներով և հասկացել է, որ դրանք չեն բավարարում հիվանդի հոգու խաղաղությունը վերականգնելուն, ուստի եկել է այն համոզման, որ լավագույն միջոցը ճշմարիտ խոսքն է, և սկսեց բուժել աշխարհի տարբեր ծայրերից իրեն դիմած հիվանդներին խոսքի ուժով (հայերենով Նարեկ էր կարդում): Լավ խոսքը կարող է երջանիկ դարձնել մարդուն, փոխել տրամադրությունը, վստահություն ներշնչել ապագայի նկատմամբ: Այսօր արդի հրամայականն է յուրաքանչյուրից պահանջելու հարգանք միմյանց, պետության, պետության քաղաքացու նկատմամբ:

Խոսքը զորավոր ազդեցություն ունի անհատի և հանրության վրա: Գեղեցիկ, կրքոտ խոսքը նույնիսկ հաղթանակներ է ապահովել ռազմի դաշտում, հերոսացման է մղել հայրենիքի զինվորին, պայնավորել հաջողությունը անձնային հարաբերություններում և

գործի մեջ: «Ազդու, գեղեցիկ, տպավորիչ, տրամաբանված խոսքը հզոր գործիք է բոլոր նրանց համար, ովքեր ուզում են հասարակության մեջ և հանրային կյանքում որոշակի դիրք ունենալ, կարիերա ստեղծել կամ պարզապես ներդաշնակ հաղորդակցվել մարդկանց հետ, միջավայրում երևալ որպես նպատակային, բանիմաց ու հետաքրքիր անձնավորություն» («Հայոց լեզվի և խոսքի մշակույթ»– ԵՊՀ, Երևան – 2016, էջ՝ 4):

«Խոսքը մարդու մեծագույն զենքերից է» (Ա. Կոնի): Անտիկ աշխարհում խոսքը համարվել է արվեստ, ունեցել են ճարտասանական դպրոցներ, որոնք պատրաստել են ժամանակի գրագետ մարդկանց: Մարդու մասին խոսում է հենց խոսքը «Խոսի՛ր, որ ճանաչեմ քեզ»: Այստեղ դարձյալ պետք է դիմենք ժողովրդական իմաստնությանը. «Հագուստով ընդունում են, խոսքով ճանապարհում»: Գեղեցիկ խոսքը, հարուստ բառապաշարը, արտահայտիչ խոսքը ապացույցն են բարձր մշակույթի կրողի, մտավոր զարգացվածության, վարվեցողության, կիրթ լինելու ցուցիչ են: Մեր նպատակներից է նաև շրջապատող աշխարհը և մարդուն հասկանալ, մարդկանց հետ հաղորդակցվել՝ արտահայտելով սեփական մտքերն ու հույզերը գրագետ հայերենով, գեղեցիկ և հարուստ բառապաշարով՝ համեմված ժողովրդական ասացվածքներով, իմաստուն մտքերով: Հաղորդակցվելու շնորհքը մարդու մեծագույն հարստությունն է: Այստեղ տեղին է մեջ բերել ժողովրդի իմաստնությունը. «Քաղցր լեզուն օձը բնից կհանե»:

Ով խոսել չի կարողանում,
նա չի կարող կարիերա ստեղծել:
Նապոլեոն

Արձակ առակների ուսուցմամբ մենք կյանքի ենք կոչում ՀՊՉ սահմանված առանցքային մի քանի կարողունակություն՝ լեզվական և գրագիտության, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային և մաթեմատիկական: Առակների ուսուցումը զարգացնում է սովորողի բանավոր խոսքը. պարտադրում է տիրապետել մայրենիին, գրագետ հաղորդակցվել, դերային խաղի դեպքում ինքնուրույն և մյուսների հետ համատեղ աշխատանք, առակների միջոցով սովորողը ճանաչում է ինքն իրեն, ինքնակազմակերպվում է (սոցիալական կարողունակություն), հասկանում և գնահատում է բարեվարքության, սոցիալական արդարության, իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացման կարևորությունը, հասկանում է հայ մշակույթի

դերը մարդկային քաղաքակրթությունների համայնապատկերի վրա և արժևորում սեփականը:

Ինչո՞ւ ենք առանձնացնում առակները՝ որպես բանավոր խոսքի զարգացման կարևոր միջոց: Այս մասին արդեն նախանշել է Մ. Մաշտոցը դեռ 5 – րդ դարում:

Հատկանշական է «Քալիլա և Դիմնա» գրքի պատմությունը. այն հնդկական առակների ժողովածու է, որն աչքի է ընկնում ինքնատիպ ու զարմանալի ճակատագրով: Ըստ ավանդության՝ ստեղծվել է հնագույն ժամանակներում, Հին Հնդկաստանում համարվել է իմաստության գանձարան և որպես դասագիրք՝ գործածվել թագաժառանգների կրթության համար: Դարեր շարունակ այս գիրքը որպես մեծարժեք գանձ համարվել է հնդկական արքունիքի գաղտնիքներից մեկը և աշխարհին հայտնի է դարձել միայն VI դարում, երբ պալատական բժիշկը պարսից արքայից արքայի հրամանով գիրքը գաղտնի թարգմանել է պահլավերեն(միջին պարսկերեն): Հետաքրքիր է այն, որ այդ գործը գլուխ բերելու համար պարսիկները բժշկին մեծամեծ պարգևներ են խոստացել, բայց նա հրաժարվել է նյութական պարգևներից և խնդրել, որ գրքում իր տոհմի մասին տեղեկություն գրեն: Այսպես առակները դառնում են աշխարհի «սեփականությունը»:

Առակների բարոյախրատական բնույթը դաստիարակում է սերունդներ, մարդուն տանում է ինքնաճանաչման, ապա նաև սեփական վարքի և խոհերի ինքնաքննության, որն էլ մղում է անհատի ինքնակազմակերպման: Առակավոր խոսքը հարուստ է թևավոր արտահայտություններով, որոնք միտված են հասարակական երևույթների, նաև մարդկային բնութագրի դրական գնահատմանը: Առակավոր խորհուրդները, հորդորներն ու պատվիրանները ժողովրդական իմաստնություններ են՝ կենսափորձով ապացուցված, որոնք հնարավորություն են ընձեռում սովորողին կյանքի տարբեր իրավիճակները ճիշտ գնահատելու, ճիշտ կողմնորոշվելու, ճիշտ եզրահանգումների գալու, դատապարտելու բացասականը թե՛ հասարակական հարաբերություններում, թե՛ մարդկային նկարագրի մեջ: Այդպես մտածող անհատը կլինի պետության, հայրենիքի ապագան կերտողը, ընտանիքը արժևորողը, պետական մտածողությամբ օժտված քաղաքացու կերպարի կրողը: Ողջունում ենք որպես արտադասարանական ընթերցանություն Աստվաշնչից «Գիրք առակաց» և «Գիրք ժողովվող» բաժիններից առակավոր խրատներին անդրադարձը: Սովորողները մեծ ոգևորությամբ դրանք կարդում են, մեկնաբանում և ներկայացնում կյանքի դասերը, ապա համադրման և հակադրման միջոցով գնահատում իրենց և հետևում իմաստուն խորհուրդներին: Առակների ուսուցմամբ սովորողը հարստացնում է բանավոր խոսքը թևավոր արտահայտություններով, դրանք

կարողանում է ճիշտ և տեղին կիրառել սեփական խոսքում, երևույթները արդիականացնել (խաչվող հասկացությունները ամբողջությամբ կիրառելի են այստեղ), ժամանակի հասարակական հարաբերությունների դրական և բասական կողմերը բացահայտել, դիրքորոշում հայտնել:

Ի սկզբանէ էր ԲԱՆ-ը

Աշխարհի արարումը սկսվել է, այո, ԲԱՆՔ-ից : Ի՞նչն է դրա իմաստը, ո՞րն է խոսքի կարևորությունը: Այս հարցերն ենք այսօր քննության նյութ դարձրել, քանի որ կարևորում ենք այն: Բոլոր ժամանակների մարդկության գերագույն կռվանը խաղաղության մեջ ապրելու և ողջ մոլորակին՝ արդարության, ճշտի մեջ երջանիկ ապրեցնելու բանալին:

«Սկզբում էր Խոսքը, Խոսքը Աստծու հետ էր, և Խոսքը աստված էր: Ամեն ինչ նրա միջոցով ստեղծվեց, և առանց նրա ոչինչ չստեղծվեց: Այն, ինչ ստեղծվեց նրա միջոցով, կյանքն էր, և կյանքը մարդկանց լույսն էր /Ավետարան Հովհաննեսի -1-ին գլուխ, $ 1-ին/: Խոսքը մարմին դարձավ ու բնակվեց մեր մեջ, ու մենք նրա փառքը տեսանք»/ գլուխ 14-րդ/:

Որտե՞ղ է թաքնված ասվածի իմաստը: Մենք փորձում ենք միասին բացահայտել այն: Բացահայտումը նորություն չէ, դրա վառ ապացույցն արդեն ունենք հանձին Նարեկացու մատյանի: Նարեկացին հավատում է մարդու ներքին ուժին, որով կկարողանա մաքրագործվել, բժշկվել: Մարդուն կատարյալ տեսնելու խոր ցանկությունն էր, որ վերածվեց «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստված»: Այս խոսքն ունեցավ ոչ միայն հրաշագործ հատկություն մարդկության համար, այլև դարձավ բալասան: Ինչո՞ւ են Նարեկի աղոթքներով /խոսքով/ զարմանալիորեն բուժվում մաշկային, ոսկրային որոշ հիվանդություններ, գլխացավ, կուրություն և այլք: Աշխարհի հզորագույն գիտատեխնիկական ինստիտուտները, կլինիկաները չեն կարողանում գտնել ախտորոշումը, մինչդեռ մատյանի ունկնդրումը խաղաղեցնում է մարդու մարմինն ու հոգի/տես –Նարեկաբուժություն/: Սա համամարդկային դեղ է, հաբեր: Խոսքը ուժ ունի, զորեղ է, այն կարող է մարդկանց հոգիները դարմանել և հակառակը՝ կործանել: Պատահական չեն բարեմաղթանքները սկսվում *բարի* բառով «բարի լույս, բարի առավոտ, բարի օր, բարի երեկո, բարի գիշեր, բարի գալուստ, բարի վերադարձ և այլք»: Անկախ օրվա տրամադրությունից *բարի առավոտը* կարծես փոխում, ապահովում է օրվա հաջող ընթացքը : Այն, ինչ չի կարող անել շատ ժամանակ բժշկությունը /իր տարբեր մեթոդներով/, անում է խոսքը: Այն աղոթք է, խնդրանք, վերաբերմունք, վարվեցողություն, մտքի և հոգու

դրսևորում: Ինչպես խոսելը ժամանակի պահանջն է, դպրոցի առջև դրված հ.1 խնդիրը: Ի՞նչ է անում ուսուցիչը խնդրին լուծում տալու համար: Այստեղ համատեղ ջանքերն են պետք: Գեղեցիկ խոսքի մշակույթը չի ճանաչում մասնագիտություն կամ տարիք . այն պետք է ձևավորվի դեռ մանկությունից, իսկ դպրոցի դերը կլինի ապահովել սովորողի հայեցի, գրագետ, հարուստ բառապաշարով հաղորդակցվելու հմտությունների և կարողությունների զարգացումը, որով սովորողին կճանապարհի նոր կյանք: Նման կարողունակություններ և հմտություններ ունեցող քաղաքացին հետագայում կերտելու է բարեվարքության, սոցիալական արդարության, իրավական պետության գաղափարի վրա հիմնված հասարակություն, զարգացած մշակույթ:

Առաջադրած հարցի պատասխանը առակների ուսուցումն է. դրանք հարուստ են թևավոր արտահայտություններով, առաջադրում են տարաբնույթ մտքեր, որոնք ակնարկում են կյանքի տարբեր իրադարձություններ կամ երևույթներ, այլաբանորեն տալիս լուծումներ խրատների, առակավոր խորհուրդների ու հորդորների, իմաստությունների ու պատվիրանների միջոցով : Այս մասին գիտակցել է դեռ 5-րդ դարում Մ. Մաշտոցը, որ հայոց գրերի լայն տարածումը կապեց աստվածաշնչյան առակների ուսուցման հետ և չսխալվեց. պատրաստեց գրագետ մարդկանց մի ողջ բանակ, որոնք իրականացրին հայ գրի ուսուցման և արագ տարածման գործընթացը:

Մեր փորձը ապացուցել է, որ աշակերտները հեշտությամբ են յուրացնում արձակ առակները, ընկալում դրանց այլաբանական միտքը, համեմատություն անում ժամանակի և տարածության մեջ, յուրացնում են խրատները, դրանց շուրջ սեփական մտքերը հայտնում և դատողություններ անում, ստացած խրատներով և հորդորներով ուղղում սեփական վարքը, փոխում վարվեցողության ձևերը, ուղղում խոսքը. չէ՞ որ խոսքը մտածողություն է: Վերջինս թելադրում է մարդու վարքագիծը, իսկ վարքագիծն էլ դառնում է արժեք. Այն, ինչ ՀՊՉ-ն այսօր պահանջում է: Այստեղ մեջբերում ենք Աստվաշնչից մի քանի թևավոր խոսք:

Թող ձեր խոսքը միշտ վայելուչ լինի, աղով համեմված /նմկ. Տիմոթեոսին-էջ՝1783/

Ամու՛ր բռնիր առողջ խոսքերի օրինակը / գիրք Առակաց –էջ՝ 1048/

Ճիշտ ժամանակին ասված խոսքը նման է ոսկե խմձորների, որ փորագրված արծաթե անոթի մեջ են:

Որքան հաճելի են իմ քիմքին քո խոսքերը

Ավելի հաճելի են, քան մեղրն իմ բերանին/գիրք Առակաց/:

Ներկայացնում ենք օրինակելի դասը՝ անցկացված 5-րդ դասարանում

Թեմա - Առակ

Նպատակ - Առակի այլաբանական միտքը հասկանալու, վերլուծելու, եզրահանգումներ անելու կարողությունների զարգացում, դաստիարակչական բնույթը ընկալելու և դասեր քաղելու ունակությունների ձևավորում:

Խնդիրներ - Իմանալ ինչ է առակը, կառուցվածքը, անգիր ներկայացնել կամ պատմել կարողանալ, կարողանալ մեկնաբանել բարոյախրատական մասը, գնահատել և դատապարտել մարդկային բնավորության դրական և բացասական կողմերը:

Դիդակտիկա - Տեսաֆիլմ, գունավոր մատիտներ, թղթեր, գործնական աշխատանքներ, Առակագիրների դիմանկարներ:

Մեթոդներ - Բաց հարցեր, դերասանական խաղ

Ընթացքը __ «**Աղվեսն ու ագռավը**» մուլտֆիլմի դիտում:

Հարցեր __ 1. Ո՞վ է առակի հեղինակը: 2. Ո՞րն է բարոյախոսությունը: 3. Ի՞նչ է ուսանում մեզ:





Էլգրատախտակի վրա նկարներ են, առաջադրանք՝

1. Գտնել գաղտնագրված առակների հերոսներին և ասել առակի վերնագիրն ու հեղինակին:

2. Քաշել կպչուն թերթիկները և ըստ հերոսների՝ բաժանվել խմբերի:

3. Խմբերը պատրաստվում են ներկայացնել տվյալ առակը դերերով/ 6-7 ր/:

4. Խմբի անդամներից մեկը նախապես հեղինակի մասին հակիրճ տեղեկություն է հաղորդում / 1ր/:

5. Խմբի անդամներին գնահատում են իրենք՝ աշակերտները / և՛ միավորային, և՛ ձևավորող. Միավորայինը մեկնաբանվում է/:

Աշակերտներին նախապես հանձնարարված է եղել առակների թեմայով դիդակտիկ նյութ պատրաստել կամ նկարազարդում: Կատարողները ներկայացնում են իրենց աշխատանքները և մեկնաբանում ինչու հենց այդ հերոսը:

Ամփոփում

1.Ի՞նչ է առակը. ժանր, կառուցվածք, տեսակ, հերոսներ, հեղինակ:

2.Ինչո՞ւ ենք ուսումնասիրում առակները:

3.Որքանո՞վ է այն անհրաժեշտ մեզ:

4.Ի՞նչն(ո՞վ)է դատապարտվում կամ գովանբանվում առակներում:

5.Ընտրել այն 3 բարոյական խրատները, որոնցով առաջնորդվելում եմ կյանքում, ինչու, կամ որոնք փոխել են ինձ, օգնել են ճիշտ ուղու վրա կանգնել:

Տանը__ Դրանցից մեկը դարձնել շարադրության վերնագիր և կազմել կապակցված խոսք կամ հորինել առակ:

Վերջում իրենց պատրաստած էջանշանները կամ ձեռքի աշխատանքները նվիրում են հյուրերին:

«Իմաստության արահետներով»

Ներկայացնում ենք «Իմաստության արահետներով» խորագրով բեմագիրը, որը կազմվել է տարբեր առակների հիման վրա և ներկայացվել տիկնիկային ներկայացման ձևով: Աշխատատար, ծավալուն և դժվար աշխատանք է, բայց այնքան մեծ էր երեխաների ոգևորությունը, խանդավառությունը, որ արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիքները: Ներկայացումը ստիպված եղանք կրկնել մի քանի անգամ, որպեսզի դպրոցի բոլոր երեխաները կարողանան տեսնել:

Բեմում ձևավորել էինք անտառային տեսարան, գործող կերպարները անտառային կենդանիներ էին, տիկնիկները պատրաստել էինք երեխաների ուժերով:

Տեսարան 1.

- Ի՞նչ լավն է չէ՞ մեր անտառը: *(նապաստակ)*
- Իհարկե լավն է, այ տեսեք՝ ծառ ու ծաղիկ ծաղկել են, գարունը նորից բացվել է, անուշ բույրով ողջ անտառը լցվել է: *(նապաստակ)*
- Ծառերն էլ բողբոջել են, գործս էլ արդեն բացվել է: *(փայտփորիկ)*
  Ծառից ծառ պիտի անցնեմ, որդից, թրթուրից անտառն ազատեմ:
- Ձա՜ն, ջա՜ն, ջա՜ն գարուն է, մեր անտառը սիրու՜ն է:
- Ի՞նչ, ի՞նչ գարունը բացվե՞լ է, պիտի արթնանա՞մ, օ՜ֆ ի՜նչ հոգնած եմ: *(արջ)*
- Հոգնա՞ծ ես:
- Հոգնել է, բա ինչ, կարծում եք՝ հեշտ է արջի գործը, դե, ամբողջ ձմեռ պիտի քնի:
- Հա՜, շա՜տ դժվար է, դե տեղդ պիտի հարմար լինի, երազներդ պիտի հաճելի լինեն: *(արջ)*
- Լավ, լավ արթնացիր, ա՛յ քնկոտ, տես՝ ես արդեն հագած, կապած, պոչս սիրուն սանրած գործի եմ գնում: *(աղվես)*
- Գործի՞, գործի՞ ես գնում, պա՜հ, պա՜հ, ձեր գործը լավ գիտեմ, շատ-շատ պիտի գյուղից հավ ու ոչխար թռցնեք, էդ էլ գո՞րծ է: *(ագռավ)*
- Հազար եմ ասել՝ մի կարգին արհեստ սովորեք, աշխատեք, ձեզ համար հանգիստ ապրեք, էլի:
- Է՜, բարեկամնե՜ր, իզուր եք մտահոգվում՝ սրան խելք ու խրատ եք տալիս, չգիտե՞ք՝ մի ականջից մտնում է, մյուսից դուրս գալիս:
- Ճիշտ են ասում էլի՝ սևին սապոնն ինչ կանի, որ խևին խրատն ինչ անի:

- Տեսե՛ք, տեսե՛ք՝ ով է գալիս:
- Օ՛ֆ, էլ այսպես չի կարող շարունակվել: *(իշուկ)*
- Ի՞նչ է եղել, իշու՛կ, քեզ ո՞վ է նեղացրել:
- Տխու՞ր ես, ի՞նչ է եղել, նստի՛ր, պատմի՛ր:
- Հա՛, հա՛ պատմի՛ր, գուցե կարողանանք քո դարդին դարման անել:
- Հոգնել եմ, հանգիստ ու դադար չունեմ ես մարդու ձեռքին, չեմ հասկանում էդ մարդկանց, ամբողջ օրը աշխատում են, ինձ էլ հետները տանջում: *(իշուկ)*
- Աշխատու՞մ ես, ի՞նչ ես անում որ:
- Ի՞նչ եմ անում, դու էն հարցրու ի՛նչ չեմ անում, էլ անտառից փայտ եմ կրում, էլ լեռներից քար, էլ ջաղացից ալյուր, Ո՞ր մեկն ասեմ... *(իշուկ)*
- Կհոգնես բա ինչ կանես, խե՛ղճ իշուկ, երևի ոտքերդ էլ, մեջքդ էլ ցավում են, չէ՞:
- Չէ՛, հաստատ որոշել եմ: *(իշուկ)*
- Ի՞նչ ես որոշել:
- Էլ գյուղ չե՛մ գնա, չե՛մ գնա, հա՛ հաստատ՛, կմնամ անատառում, հրես, կանաչ խոտ ինչքան ուզես, կուտեմ կխմեմ կպառկեմ, կքնեմ: *(իշուկ)*
- Ինչ լավ քեզ տեսա, իշու՛կ ջան, ինչ լավ է եկար, արի՛-արի՛, էս չորացած ճյուղերը էստեղից պիտի տանենք: *(փայտփորիկ)*
- Տեսնու՞մ եք, չէ՞, ավա՛ղ, չար աստղի տակ եմ ծնվել ես, երևի սա էլ իմ ճակատագիրն է, ի՛նչ անեմ: *(իշուկ)*
- Է՛, իշու՛կ ջան, գյուղից փախար՝ հոգնել էիր, բախտիցդ ու՞ր պիտի փախչես, գնա՛-գնա՛, բե՛ռդ կրիր:

Տեսարան 2.

- Աղվեսին չե՞ք տեսել, որ կողմ գնաց, տեսնում եք, էլի չսպասեց: *(գայլ)*
- Վա՜յ, գայլու՛կ, էդ դու՞ ես, էս ի՞նչ օրի ես:
- Ինչքա՜ն գունատ ես:
- Հա էլի, ոնց որ ցամաք ձորի աղվես լինես:
- Էհ, դարդերս իրար տվեցիք, գիտեք՝ ինչ սև օրեր եմ անցկացրել, ամբողջ ձմեռ սոված-ծարավ ման եմ եկել, սար, ձոր, անտառ, տեղ չեմ թողել, ուտելու մի բան չկար, միայն սպիտակ ձյուն: *(գայլ)*
- Ախր, ա՛յ գայլ եղբայր, էսքան տարի ապրում ես, բայց ոչ մի անգամ ձմռան համար կարգին պատրաստություն չես տեսնում:
- Հա էլի, մի կարգին բույն շինիր, ձմռան համար պաշար հավաքիր: *(ագռավ)*
- Ավելին ասեմ՝ պապս ասում էր՝ մանգաղդ սրիր ձմռանը, մուշտակդ կարիր ամառնը:
- Ի՜նչ եք ասում է, ի՞նչ մուշտակ, ի՞նչ մանգաղ, ինչի՞ս են պետք: *(գայլ)*
- Չես հասկանում, գա՛յլ եղբայր ջան, ՈՒԶՈՒՄ Է ԱՍԵԼ՝ ԺԱՄԱՆԱԿԴ ԶՈՒՐ մի կորցրու, ամռանը ձմռան համար նախապատրաստվիր:
- Լավ, դե հա, գարունը նոր է բացվել, մինչև ձմեռ ահագին ժամանակ կա, մի բան կանենք: *(գայլ)*
- Տեսեք՝ ո՜վ է մեզ հյուր եկել:
- Վա՜յ, շնի՛կ, դու՞ ես, ի՞նչ ես կորցրել մեր կողմերում:
- Եկել եմ, տեսնեմ ինչ կա-չկա, գիտեք չէ՝ անտառն ինչքան շատ եմ սիրում: *(շուն)*
- Էս ինչ էլ լավ տեսք ունես, շնի՛կ ջան, կերած-խմած, լավ խնամված, գործերդ լա՞վ են:
- Հա, դժգոհ չեմ, շատ լավ են, տերս ինձ շատ լավ է պահում, օրը երեք անգամ կերակրում է, սիրում, փայփայում: *(շուն)*
- Ոնց թե, օրը երեք անգամ կերակրում է, ինձ էլ չի՞ պահի: *(գայլ)*
- Կարծում եմ՝ կպահի, շա՜տ բարի մարդ է, արի միասին գյուղ գնանք: *(շուն)*
- Հա էլի կգամ, լավ էլ կգամ, բայց սպասիր, շնի՛կ ջան, վզիցդ էդ ի՞նչ շղթա է կախված: *(գայլ)*
- Էս շղթաս, սրանով է տերս ինձ կապում: *(շուն)*
- Ո՞նց թե կապում է, կապում է նո՞ր է կերակրում: *(գայլ)*
- Հա չգիտե՞ս, բա ձևն այդպես է: *(շուն)*

- Որ էդպես է, չեմ գա, լավ է ազատ ապրեմ, թեկուզ քաղցած, քան կուշտ լինեմ ու կապված: *(գայլ)*

Տեսարան 3.

Երգում են

Հայտնվում է աղվեսը՝ պոչը չկա:

- Եկա՞ր աղվես ջան, գործդ վերջացավ, բա պոչդ ու՞ր է: *(ագռավ)*
- Վա՛յ, աղվեսի պոչը չկա:
- Վա՛յ, աղվեսը պոչատ է:

Երգում են՝ Չալ աղվեսը պոչատ է, պոչատ է, պոչատ է:

- Ի՞նչ, աղվեսը պոչից զրկվե՞լ է, էն սիրուն պոչից:
- Ուր պիտի լինի, ինչ է, չգիտեք, էլի քիթը ուրիշների գործերի մեջ է մտցրել, բայց իր պոչից է զրկվել: *(ագռավ)*
- Ի՞նչ եք բարբաջում, պոչս, հա՛, չկա, Է՛ն սիրուն պոչս, հազար արժեր, բայց չկա, որովհետև երեկ գեղեցկության սրահում կտրել եմ տվել: *(աղվես)*
- Չէ մի գեղեցկության սրահում կտրել է տվել, մենք էլ հիմար էինք, հավատացինք:
- Երեկ ընկերուհիս էր զանգել Փարիզից: *(աղվես)*
- Էտ փարիզցի ընկերուհիդ որտեղի՞ց հայտնվեց:
- Գիտեք՝ ինչ է ասում, գաղտնիք է, բայց ձեզ կասեմ, չէ՞ որ ձեզանից գաղտնիք չունեմ, ասում էր, որ այս տարի երկար պոչը Եվրոպայում նորաձև չէ, եթե դուք էլ եք ուզում նորաձևության վերջին ճիչը լսել, դուք էլ գնացեք և ձեր պոչերը կտրել տվեք: *(աղվես)*
- Պոչերս կտրե՞նք:
- Ախ, աղվես, աղվես, խորամանկ աղվես, բայց գաղտնիքդ ինչու՞ թաքցրիր այսքան ժամանակ, ու ասացիր, երբ արդեն զրկվել ես պոչից: *(ագռավ)*
- Գիտեի, որ չեք հավատալու, ասա, ինչ եմ մտածում, չեն ուզում նորաձև դառնալ, թող այդպես հետամնաց էլ ապրեն: *(աղվես)*
- Լավ, լավ, լռիր, էտ խորամանկ լեզուդ օձին բնից կհանի:
- Հա, հա, օձին բնից կհանի, ա՛յ ժողովուրդ, էդ օձից ես բան չհասկացա: *(արջ)*
- Ինչու՞ ա՛րջ ախպեր, ի՞նչ է եղել որ:
- Հիմա լսեք, պատմեմ. մի անգամ եկավ, թե՝ ա՛րջ ախպեր, արի ախպերանանք, թե մեկս քնի, մյուսս հսկի, եկ իրար պահենք, եկ իրար շահենք, ընկերովի կյանք վայելենք, ես էլ թե՝ արի, ասինք, երդվեցինք, իրար խոսք տվեցինք...

- Վայ, ինչ լավ է ընկերություն էի՞ք անում:
- Հետո, բա հետո ի՞նչ եղավ:
- Հետո, դե էլ ինչ հետո, էտ օձը մի տեսակ էն չէր, պառկում էի էս կողմ, էս կողմից էր սողում, էն կողմ՝ էն կողմից էր սողեսող գալիս:
- Հա, ես գիտեմ, օձը էսպես է սողում:
- Ես չեմ, դուք եք, դե ասեք, բա էդպես ընկեր կլինի՞:
- Դե իհարկե, լավ ընկերը միշտ միշտ ազնիվ ու շիտակ պիտի լինի:
- Դե ես էլ էդ եմ ասում էլի, թե լավ ընկեր էր, թե մտքին վատ բան չկար, ի՞նչ էր էդպես գողեգող գալիս:
- Հետո՞, բա հետո ի՞նչ եղավ:
- Հետո, դե էլ ինչ հետո, մի օր էլ չդիմացա, օձին ճզմեցի ու տարա հեռու գետը գցեցի:
- Օձին խեղդեցի՞ր:
- Հա, խեղդեցի:
- Վա՛յ արջուկ, քո պատմածով, ախր, օձը հեչ մեղք չունի:
- Ճիշտ է ասում, արջու՛կ, բա չգիտես՝ ամեն մեկը իր նմանի հետ պիտի ընկերություն անի:
- Էդ ես էլ գիտեմ, ավելին ասեմ, պապս ասում էր՝ «Ասա ով է ընկերդ, ասեմ ով ես դու»:

Երգում են

	Կարող ենք բարեկամ դառնալ, Իրար կարող ենք հասկանալ,
I	Օգնել միմյանց դժվար պահին, Ազնիվ ընկերներ միշտ մնալ:
	Առանց ընկեր դժվար է շատ, Առանց ընկեր տխուր է շատ,
II	Թե լավ ընկեր ունենաս դու հաշտ, Դու կմնաս հավերժ անպարտ:

- Այստե՛ղ ինչ լավ է, մաքուր, կանաչ, արևն էլ պայծառ է ու տաք: *(մկնիկներ)*
- Հաստատ ավելի լավ է, քան մութ ու ցուրտ մառանը:
- Հենց այստեղ էլ կխաղանք:

- Մկնիկնե՛ր, առանց մեծերի անտա՞ռ եք եկել, իսկ ձերոնք գիտե՞ն, թույլտվություն ունե՞ք:
- Դե մերոնք շատ զբաղված են, ժամանակ էլ չունեն մեր մասին մտածելու:
- Երևի մեր բացակայությունը չեն էլ նկատել:
- Ինչո՞վ են այդքան զբաղված:
- Չգիտե՞ք, գումարվել էլ մկների ժողովի հերթական նստաշրջանը:
- Քանի օր է՝ գզիրը դռնեդուռ ընկել, ահել-ջահել ժողովի է կանչում:
- Ժողո՞վ, մկների ժողովը ո՞րն է, ինչի՞ համար է:
- Դե մեր մկստանում շատ վատ վիճակ է:
- Հանգիստ ու դադար չունենք էդ մլավան կատվի ձեռքից:
- Բայց փրկության մի լավ գաղափար կա:
- Մի զանգ կա, պիտի տանեն կատվի վզից կախեն, որ ինչքան էլ օրորա, որ ինչքան էլ շորորա, բոլոր մկները ահեղ գազանի գալը իմանան:
- Լավ միտք է, բա ինչու՞ չեք իրագործում:
- Հենց դրա համար էլ ժողով են անում:
- Պիտի ընտրեն այն անձնազոհ մկնիկին, որին կարելի է այս գործը վստահել:
- Բայց դուք իզուր այդ ժողովին չեք մասնակցում:
- Ճիշտ է ասում, կարող է ձեր օգնության կարիքն էլ լինի:
- Չէ, չէ, մենք չենք կարող գնալ, մենք ժամանակ չունենք, Դիսնեյ Լենդ պիտի գնանք:
- Դիսնեյ Լե՞նդ, Դիսնեյ Լենդում ի՞նչ գործ ունեք:
- Մենք մի ընկեր ունենք, Մկստանցի Մըստոն, ճանաչու՞մ եք:
- Էն Մըստոն, որ կաղ է:
- Հա, հա, հենց էդ կաղ Մըստոն, նա մեկ տարի առաջ Դիսնեյ Լենդ գնաց ու գիտեք ինչ մեծ հաջողության հասավ:
- Հա բա ոնց, Միկի Մաուս է դարձել, գործերը գիտեք ինչ լավ են:
- Մեզ էլ պիտի կանչի՝ գնանք:
- Բա որ գնաք Դիսնեյ Լենդ, ձեր Մկստանը չե՞ք կարոտի:
- Դե մենք անպայման կվերադառնանք, թող մերոնք կատվի հարցը լուծեն, ամեն ինչ լավ լինի, անպայման կվերադառնանք:
- Է՛, փոքրիկ եք, դեռ չեք հասկանում, իզուր չեն ասում՝ ծառն ուժեղ է իր արմատներով:

- Ախր, օտար հողում դուք ինչքան էլ հաջողություն ունենաք, մեկ է, երջանիկ լինել չեք կարող:
- Ճիշտ է, աշխարհում ամենալավ տեղը հայրենի տունն է. այ, ինձ համար իմ անտառից լավ տեղ չկա:
- Այստեղ ենք ծնվել, այստեղ մեծացել, այստեղ էլ կապրենք ու կերգենք՝

Արևը մեզ էլի ժպտաց
Ու արթնացան խոտերը թաց
Ծաղիկները ժպտացին
Քեզ բարի լույս կանաչ անտառ, քեզ բարի լույս կանաչ անտառ

- Մի կողմ քաշվեք, մի կողմ քաշվեք, առյուծ արքան է գալիս:
- Առյու՛ծ արքա, բարով եկաք, եկեք մեկտեղ ուրախանանք, երգենք, պարենք զվարճանանք:
- Երգեք, երգեք, ուրախացեք, կյանքը վայելեք, այնպես կանցնի կգնա, որ բան չեք հասկանա, քանի կարող եք, երգեք, ուրախացեք:
- Եթե կարծում եք, թե կյանքը միայն վայելք է, շատ եք սխալվում, պիտի իմանաք, որ շատ վտանգներ կան, իսկ ամենամեծ վտանգը, ա՛յ ամենամեծ վտանգը մարդկանցից սպասեք, մարդկանցից, ես հո լավ գիտեմ, 100 տարի իզուր չեմ ապրել: *(ագռավ)*
- Բայց ինչ չարն ես, այ կռավա՛ն, չարալեզու՛, հենց տեսնում ես ուրախանում ենք, պիտի անպայման վատ բաների մասին խոսես, չէ՞:
- Ես չա՞րն եմ, ոչ, ես պարզապես զգուշացնում եմ, էս հարյուր տարին հո իզուր չեմ ապրել, մի բան գիտեմ, չէ՞: *(ագռավ)*
- Ով է էդ մարդը, որ էդպես վախենում եք, հեչ չվախենաք քանի ես՝ անտառի ամենահզոր արքան, այստեղ եմ, ոչ մի բանից չվախենաք: *(առյուծ)*
- Ինչ լավ է, տեսեք՝ ի՞նչ պաշտպան ունենք:
- Ձա՛ն, առյուծ արքան մեր պաշտպանն է, ամենահզոր արքան:

Երգում են

Մենք ապրում ենք միասին,
Մենք երգում ենք միասին,
Չենք վախենում ոչ մեկից,

Մենք ուժեղ ենք բոլորից

- Լավ էլ երգում եք, լավ էլ պարծենկոտն եք հա, միայն մոռացել եք, որ պարծենկոտ աքլորի վերջը աղվեսի փորն է: *(ագռավ)*
- Տեսնենք ինչ պիտի անեք, հրեն մարդը գալիս է:
- Ի՞նչ, ի՞նչ մարդը գալի՞ս է, վա՜յ, ի՞նչ պիտի անենք:
- Ի՞նչ պիտի անենք, փախչենք, փրկվենք:
- Փախչում եք հա, բա երգում էիք, բա չէիք վախենում: *(ագռավ)*
- Բա որ ասում էի՝ ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում:
- Է՜, ինչու՞ եք վախենում, ես այստեղ եմ, մի՜ վախեցեք, փախան վախկոտները, իսկ ես չեմ վախենում, ես ուժեղ եմ, հզոր, մարդը ինձ ի՞նչ պիտի անի:

Մարդն է խոսում՝ Մի քիչ նստեմ, հանգստանամ, նորից դաշտ պիտի գնամ, շատ գործ ունեմ դեռ անելու:

- Տե՜ր արքա, էս է մարդը, մա՜րդ ախպեր, մա՜րդ ախպեր արթնացի՜ր, արթնացի՜ր, տես՝ առյուծն է, առյուծը:
- Ախպե՜ր, ախպե՜ր, դու՞ ես մարդը:
- Ես եմ:
- Էդ ո՞վ ես, որ բոլորին վախեցրել ես:
- Ե՞ս, ես հասարակ հողագործ եմ, առավոտը լույսը չբացված հանդ եմ գնում, հոգնած դադրած տուն եմ գալիս, երբ մութն ընկնում է, սովորական մարդ եմ էլի բոլորի նման:
- Հողագործ ես, դաշտ ես գնում, ինչ ես անում, չգիտեմ, մեկ է՝ ես քեզնից ուժեղ եմ:
- Դե հնարավոր է, կարող է պատահել:
- Ո՞նց թե հնարավոր է, կարող է պատահել, էդ ծաղրու՞մ ես, չգիտե՞ս ես ով եմ, ես գազանների ամենահզոր արքան եմ, թագս չե՞ս տեսնում, ես հաստատ քեզնից ուժեղ եմ:
- Ա՜յ քեզ փորձանք, դե հա թագդ տեսնում եմ, ո՞նց չէ:
- Չես հավատում հա՞, դե արի կռվենք, տեսնենք՝ ո՞վ է ուժեղ:
- Լավ, որ ուզում ես, արի, բայց դե զենքերս մոտս չեն, իսկ քոնը քեզ հետ են, ինչ էլ սու՜ր են:
- Սուր են, բա ինչ են:

- Ախր, որ հիմա կռվենք, արդար չի լինի, դու զինված ես, ես՝ անզեն, արի, գիտե՞ս՝ ինչ անենք, ես գնամ տուն, զենքերս վերցնեմ-բերեմ, հետո նոր կռվենք:
- Էդ էլ կլինի, դե վերջապես գնա զենքերդ բեր կռվենք, տեսնենք՝ իսկապես էդքան հզոր ես:
- Բայց գիտե՞ս՝ ինչ եմ մտածում, կարո՞ղ է մինչև իմ գալը փախչես:
- Ես փախչե՞մ, ես ինչու՞ պիտի փախչեմ, ես ուժեղ եմ, հզոր, ինչից պիտի փախչեմ:
- Դե որ այդպես է, արի քեզ կապեմ:
- Լավ, կապիր, ինչ կա որ:

(կապում է)

- Այ շատ ապրես, դե հիմա գործի անցնենք, լավ էլ դաղում է, դե առյուծ ջան կռվել էիր ուզում, ուզում էիր տեսնել, թե մեզնից ով է ուժեղ, դե հիմա տես:
- Հը, առյուծ արքա, ո՞նց ես, որ ասում էի մարդուց վախեցիր, չէիր հավատում, ես հո լավ գիտեմ, 100 տարի իզու՞ր եմ ապրել: *(ագռավ)*
- Օ՛, ինչ դաժան է ճշմարտությունը, բայց լավ հասկացա թե ինչն ինչոց է: *(առյուծ)*
- Ի՞նչ հասկացար, առյու՛ծ արքա:
- Օ՛վ, գազաններ մեծ անտառի, լսեք խոսքը ծեր արքայի, թե ուզում եք լինել հզոր, լավ իմացեք՝ ուժի հետ մեկտեղ ամեն մեկին էլ խելք է հարկավոր:

Երգում են

Կյանքը մեզ շնորհված է,
Կյանքը արկածներով լցված է,
Լի է զարմանալի գաղտնիքներով
Կյանքը մեզ մի անգամ տրվում է
Բայց ինչ էլ կյանքում այս պատահում է
Պետք է հաղթահարենք ուրախությամբ:
Աշխատիր լինել միշտ երջանիկ, միշտ երջանիկ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի հրամայականն է ունենալ զարգացած, կիրթ հասարակություն, որի վրա պիտի կառուցվի մեր այսօրվա և վաղվա ազգային պետությունը:

Առաջին կրթօջախը դպրոցն է: Նա է պատասխանատու առողջ մտածողությամբ զինված քաղաքացու ձևավորման համար:

Վերջինիս ճարտարապետը հարուստ բառապաշարով, թևավոր արտահայտություններով, ժողովրդական իմաստնությամբ համեմված խոսքն է:

Ուստի առաջարկում ենք դպրոցներում ընդգրկել «Խոսքի մշակույթ» առարկան V-XII –րդ դասարաններում:

Կարծում ենք մեր առաջարկով տարիներ հետո դպրոցը կհասնի իր նպատակին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արիստոտել – «Պոետիկա»
2. Նարեկացի – «Մատյան ողբերգության»
3. Աստվածաշունչ – Հին կտակարան/ ծաղկաքաղ/
4. Վերապատրաստման դասընթացի նյութեր
5. Թ. Ջուհարյան – «Հայ գրականության մեթոդիկա» /Երևան- 1980 /
6. Ն. Տողանյան – «Գրականության դասավանդման մեթոդիկա» / Երևան – 2018/
7. Յ. Գաբրիելյան – «Լեզվական հաղորդակցության տեսություն» / Երևան – 2018/
8. «Հայոց լեզվի և խոսքի մշակույթ» – ԵՊՀ / Երևան – 2016 /
9. Պ. Պողոսյան – «Խոսքի մշակույթ և ոճագիտության հիմունքներ» /ուսձեռնարկ, Երևան1990/
10. Առականի
11. Համապատասխան տեսանյութեր համացանցից
12. Սարուխանյան, Փիլիպոսյան – «Բանավոր և գրավոր կապակցված խոսքի զարգացումը», մեթոդական ուղեցույց /Երևան-1983/
13. Առակների ժողովածու – «Քալիլա և Դիմնա»